

ՏԱՍՆ ԵՒ ՎԵՏՏՐՈՐԻ ՏԱՐԻ



Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ: Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանց խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ». Կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և սուր օրերէն):

Յայտարարութիւն ընդունուած է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են խաբարանչիւր բառին. 2 կոպեկ:

ԲՈՒՆԱՆՍԻՍԿՈՒԹԻՒՆ

Առանձին մամուլ.—ՆԵՐՖԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գա- հանայի և երեցիկի հարցը Բագովի մէջ. Մի նկատողութիւն. Նամակ Արագածապոլից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բարձրագիտ. հա- մալարանի յօրհանար. Նամակ Թիֆլիսից. Արտաքին լուրեր.—ԽՈՒՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱՅԻՒԹԻՒՆ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԱՆԱՄՈՒ ՄԱՄՈՒ

Մի լրագիր ոյժ ունի այն ժամանակ երբ այդ լրագիրը անշեղ կերպով տարինե- րի ընթացքում հետեւում է մի և նոյն ուղղութեան, երբ լրագրի այսօրվայ ասա- ծը չէ հակառակում իր երեկվայ ասածին, անցեալ տարվայ ասածը չէ հակառակում այս տարվայ ասածին, երբ թերթի բոլոր բա- ժինների յօդուածները, ինչ ձևով էլ գրված լինեն նրանք լուրը, ծանր, թէ ծաղրական ոճով, միմեանց մէջ համարաշու են հիմնա- կան սկզբունքներում, երբ առաջնորդող յօ- դուածը չէ հակառակում ներքին տեսութեան բաժնի յօդուածներին, այդ վերջին բաժնի յօդուածները համարաշու են արտաքին բաժնի մէջ գետնոված գրուածներին, Ֆե- լիեանին էլ, որքան էլ ծաղրական ձևով գրված լինէր, իր գլխաւոր ձգտումներին, իր յարուցած մտքերի և պաշտպանած սկզ- բունքների մէջ չէ հակառակում լրագրի ընդ- հանուր, մի անգամ գծապարզած ուղղու- թեան:

Այն լրագիրը, որը փողոցը ծիծաղեցնե- լու համար, իր ֆելիեոսոսական բաժնում ոտնակոխ է անում այն սկզբունքները, ո- ռոնց պաշտպան է հանդիսացել նա իր բուն խմբագրական յօդուածներում,—այդ տեսակ լրագիր համ իր արժանաւորու- թիւնն է անպատուում, համ էլ կորցնում է այն նշանակութիւնը, որ պետք է ունենայ մամուլը, հետեւելով որոշ սկզբունքներին, որոշ ուղղութեանը:

Լրագիրը երբեք չը պետք է հլու, կու- ռորէն կերպով երկրպագի ամեն տեսակ հեղինակութիւններին, այս ինչ անձնաւո- ռութեան, այն ինչ սկզբունք, կամ երկիր անսխալական գտնելով չիմանալով մի անձ- նաւորութեան, մի սկզբունքի, մի երկրի կարգերի մէջ չոկել լուր վատից, թոյլ կողմերը լու կողմերից:

Բայց և լրագիրը երբեք չը պետք է այ- ր է այսօր այն, ինչ որ երեկ պաշտեւ է, կամ վաղը պաշտեւ այն, ինչ որ այսօր այրել է:

Անձնաւորութիւններին պետք է յար- գել բայց չէ կարելի անձնաւորութիւնները բարձրացնել մինչև երկինքը, որպէս անձ- նաւորութիւններ, որոնք մարմնացնում են իրանց մէջ մի ամբողջ սկզբունք, միայն այն պատճառով որ այդ շատ հասարակ մահկանացուները սովորական համարարա- նական ուսում են ստացել մի քաղաքա- կիրթ երկրում: Բայց ուրիշ կողմից, այդ անձնաւորութիւնները չափից դուրս բարձր, մինչև երկինքը բարձրացնելուց յետոյ, չը պետք է մի քանի տարուց յետոյ կատարե- լապէս լիճցնել ու ոտնակոխ անել նրանց, չը պետք է այդ մի ժամանակ պաշտած անձնաւորութիւնները ցեխի մէջ թաթախել ու հանել:

Այն մամուլը, որը այդպէս վարվում է, արժանի չէ մամուլի անուան, այն մամու- լը, որը նախ սկզբունքը բարձրացնելու համար մինչև երկինքը բարձրացնում է, զուցէ և անարժան անձնաւորութիւնները, և ապա, երբ նոյն անձնաւորութիւններին հետ իր յարաբերութիւնները ստուշում են սկսում է նոյն պաշտած անձնաւորութիւն- ներին ցեխի մէջ կոխել ու հանել, ուրեմն ցեխի մէջ է կոխում և սկզբունքը, մոռա- նալով իր քարոզածը թէ անձնաւորու- թիւնները յարգելի մենք պաշտում ենք և

սկզբունքը: Ուրեմն եթէ աստուածացնելով անձնաւորութիւնը դուք ստորացնում էք և սկզբունքը, ինչպէս չէք նկատել, որ տա- րիների ընթացքում դուք չիշդ նոյնն էք արել Գերմանիայում ուսում ստացած բոլոր նոր եկածների հետ. առաջին տարին բարձրացրել էք ամեն մի նոր եկածին մի- չև երկինքը, արդարացնելով ձեզ, որ դրա- նով պաշտպան էք հանդիսանում գերմա- նական կրթութեան բարձր սկզբունքի,— իսկ մի կամ մի քանի տարի անցնելուց յե- տոյ, նոյն անձնաւորութեանը սկսում էք ամեն կերպ մրտադրել մէջ կոխել, մո- ռանալով ձեր յայտնած միտքը, թէ անձ- նաւորութեան մէջ պաշտպան էք հանդի- սանում սկզբունքի: Ապա բոլոր հնէրին, որոնք դժբաղդութիւն ունեցան մի քանի տարի շարունակ ձեր խեղդող և ապահիւ- ված մթնոլորտի մէջ ապրելու. կատարելա- պէս ցեխոտելուց յետոյ, դարձեալ սկսում էք յարգել, մեծարել, փառաբանել, պաշ- տել մի նոր եկածին, մինչև որ դրա հերթն էլ կը գայ, ձեր շնորհով, ցեխի մէջ թա- ւալկելու:

Միայն ձեզանից հեռու, հայրենիքից դուրս ապրողները փրկվում էին ձեր կեղ- տուտ ձեռքով ցեխոտվելուց:

Եւ այդ բոլորը անուանվում է մեզանում մամուլ հասարակ կարծիքի օրդան, իսկ այդ տեսակ ցեխոտ մամուլի կիստօ, ան- լիկի՞, անպաշտ ու անամօթ ղեկավարները անուանվում են մեզանում հասարակաց կարծիքի առաջնորդներ:

Գ. Ա.

ՆԵՐՖԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲՈՒՆԱՆՍԻՍ ԵՒ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՐՅՈՒ ԲԱՅՈՒԹԻ ՄԵՋ

Յայտնի է, որ շատ տարիներէ ի վեր Բագովի քահանայները մէջ կար քահանայական միութիւն մտղովորը ներկայացնում էր մի ամբողջութիւն, մի համայնք. քահանայները նոյնպէս կրէք ժո- ղովորը չը գիտէր թէ քահանայները ինչպէս են բաժանում իրանց մէջ ժողովրդից ստացած ար- դիւքը, և նոյնպէս, թէ ինչպէս են բաժանում ի- ռանց մէջ իրանց գործունէութեան շրջանը: Խա- ղաղ էր և ժողովրդը և քահանայ: Եւ շատ ան- գամ ուրիշ քաղաքացիք այդ սկզբունքի վրա պատկասանքով մասնացոյց անելով արդարեւ գոյում էին մեր համայնականութիւնը: Բայց ա- ւանդ. այն մարդիկ, որոնք սկզբունքը, օրդու- ղում էին մի ժամանակ, նոյն այդ մարդիկ այ- սօր վերստի ամբողջ քաջալերութեամբ՝ ձեռ- նամուխ են լինում քանդել այդ սկզբունքը, ո- ռովհետեւ նրա հիման վրա չեն կարողանում ա- ռաջ տանել իրանց կիրքը և քահանայութիւնները: Այդ ներքին է մի անհատին, բայց ոչ թէ մի ինքնա- ճանաչ ժողովրդին: Այդ հարցը այնքան արժարձ- վել է, որ մինչև անգամ ժողովրդը ձեռնամուխ է եղել խառնվել և քահանայների տեսնական գործերի մէջ: Նախանձը, կիրքը այնքան են խեղ- ղել նրանց, որ իրանք անընդունակ են իրանց մի քանի կօպէկներին հաշիւը կարգի դնել: Մինչև այժմ այդպէս չէր. այդ ուղ կողաւ գայթակղութեան վէժը:

Երկրորդ հարցը, մի քահանայացուի մասին է: Արդարեւ ժողովրդի մէջ այդ հարցը ամենայն իրաւամբ, ստացել է սուր ընաւորութիւն: Բայց ինչ միջոցների են դիմում հակառակողները. զըղ- լելի է կատարելապէս Հրապարակի վրա դրած է մի տիրացու, Համբարձում Տէր-Աստուածատ- ընան Կան մարդիկ, որոնք գտնի են նրան արժանի քահանայական կոչման և սրա մասին արդէն գործնական միջոցներ էլ դիմել են: Բայց հասա- ռակութեան մեծ մասը, ինչպէս և նրա օգտին ստորագրողներից շատերը այժմ ընդդէմ են նրա ձեռնադրութեան: Մենք վերջինների կողմն ենք: Բայց ասե՛ք ինչպէս. յարգելի է այն միջոցը,

որին դիմում են մեր խնամակները: Հաղար ան- գամ տպած կը լինեն նրա մասին, որ Շուս տգէտ է, կօչկակար է» և այլ թոյլ յարձակումներ. և այդ կրկնում է մինչև իսկ մեր ժողովրդի մտքը- ըր ղեկավարելու խաբարակի կոչումը իր մէջ երե- ակալացող մի մարդն անգամ Ողբումիլ ժողո- վորը: Հասարակութիւնը պետք է խաղաղ կեր- պով մտածէ, լուրջ միջոցների դիմէ. արժանի է այս ինչ անը այս ինչ կոչման, թէ ոչ թէ չէ ոչ մի փողոցային յիշոց, ոչ մի աններելի միջոց պատիւ չի բերի մեզ պէս հռչակված հասարա- կութեան: Ինչ մեղաւոր է մի տիրացու, երբ հա- սարակութեան միջոց դուրս են գալիս մարդիկ, որոնք արժանի են գտնուած նրան քահանայութեան համար: Եւ յետոյ խեղճ տիրացուի անունը ծա- ման են շինել և լրագրութեան մէջ ծիծաղելի անձնաւորութիւն են դարձրել... Զարմանալի է նոյնպէս մեր տիրացուների վարմունքն էլ: Երբ հասարակութիւնը քեզ չէ ուղում քահանայ տես- նել, էլ ինչպէս դիմում են աններելի միջոցների. ու՞մ վրա են քահանայ պլինելու, ու՞մ են հովուելու: Արդե՞ք լաւ չէր լինի, որ մէկ մէկ մեր տիրա- ցուները աղին կերպով լուսնային իրանց ձեռ- քերը, և հրաժարվէին իրանց նպատակից:

Չը մտանանք, որ ծուխերի չը բաժանելու լաւ կողմերի մէջ, կայ և այս առաւելութիւնը, որ երբ ամբողջ քաղաքը մի ծուխ, մի համայնք է, ոչ մի անարժան մարդ չէ կարող քահանայ լինել, այն հիման վրա, որ տգէտի համար միշտ համակրող մասը հասարակութեան չնչին կօտակի- ղէնքը կը ներկայացնէ: Մինչդեռ բաժանելով ծուխի, նոյն այդ տգէտները մի ծուխ կազմելով կընտրեն նոյնպէս մի տգէտ քահանայ, և ուրեմն հասարակութեան հակաբող դասը չի ունենայ ոչ մի իրաւունք ներգործելու միւսի վրա:

Երբ որք հարցը երեցիկութանի հաշիւ տալու հարցն էր, որը վաղուց դիմելով հրապարակի վրա, մնացել էր առանց հետեւանքի: Աս նոյնաման մի պատմութիւն էր, ինչ որ Թիֆլիսի Քաղաքացի եկեղեցու հռչակաւոր երեցիկութանի պատմութի- յնը: Միայն մի տարբերութեամբ. այնտեղ հաշիւ պահանջող մասը մղվում էր հասարակական շա- հների նախանձանդրութեան գաղափարից, այն- տեղ գործ ունէր սկզբունքը, աշխուժութիւնը, մինչ- դեռ մեզանում կէս մասը ոչ թէ սղղակի եկեղեցու հաշիւներն էր պահանջում, ոչ, այլ իրանց անձնա- կան հաշիւը, իրանց կիրքը առաջ տանելու մտքով: Այդ է, որ նրանք մեծանկ մնացին, և հրապարա- կում մնաց միայն կիւր և Տայհոյանք: Սակայն այդ հարցը այնպէս քողարկված անցաւ, որ մենք ոչինչ չը հակադասեց: Ունենք անիրաւացի մեղ- քեր բարդեցին երեցիկութանի վրա, ունենք պաշտ- պանեցին, ունենք ուրիշներին մեղաւորող գտան և ընդհակառակը. ի վերջոյ այժմ այդ տարածալ- նութիւնների արդիւնքը այն մնաց, որ ընտրվե- ցաւ նոր երեցիկութան: Բայց հաշի մասին ժո- ղովորը ոչինչ չը գիտէ: Ես հետո եմ մէկի ու միւսի վրա մի որ և է ստուեր գցելու մտքից: Կայ լրագիր, կարող են հաշիւը լրագրութեան մէջ տպել և վարմանայնիլ ժողովրդին:

Այդ ամենից յետոյ, արդե՞ք վերջացել են մեր ժողովրդի մէջ ազմուղ և խառնակութիւնները... Եղիչէ քահանայ Գեղաման փիլիսոփայութիւն է եղել, ինչպէս. որովհետեւ Շամախու վիճակաւոր ա- ռաջնորդ Մեծարայ եպ. գալով այստեղ աշխատեց, որ այդ բոլոր խճկված հարցերին խաղաղ վախ- ճան տայ: Քահանայների կացութիւնը, որ համա- բնակ մեր բոլոր ազմուղների պատճառն էր, սըրը բազանը տնօրինեց այսպէս. ժողովրդը ծիխ չը բաժանել, քահանայները պարտաւորվին շարժվով ճերթապահ լինել եկեղեցում, իրանց առ ժողո- վորը պարտաւորութիւնները կատարելու համար միշտ պատրաստ լինելու. ունենան մի ժապաւի- նեալ մատան մուտքը այնտեղ գրելու համար և յետոյ իրանց մէջ բաժանելու համար: Յիշեալ պարտաւորութիւնների գործադրութիւնը սահմա- նափակվում է միայն երեք քահանայների համար.

Իսկ խորէն ա. քահանայ Միրզաբեգեան գործա- կալը մի և նոյն ժամանակ արտօնութիւն է ունե- նում ազատ լինել այդ հերթապահութիւնից: Պայ- մանի տակ չէ ստորագրում տեղ-կընչէն և իբր ըմբատ ուրեմն զրկվում է առժամանակ փիլիսոփ, մինչև նոր կարգադրութիւն:

Անկողմնապահ և սրտի խորքից կասեմ. չը լինէին կիրք, նախանձ, շահամոլութիւն, և անձնա- կան նեղ հաշիւներ, չէր լինի և ոչ մի անսխալօթ տարածայնութիւն, որ այսօր տակնուվրայ է ա- նում մեր հռչակաւոր Բագուն:

ՄԻ ՆԿԱՏՈՒԹԻՒՆ

«Արձագանք» շարժաթղթի խմբագիր Արզար Թովանիսեան շարքելած լինելով բոլոր հարցե- րում, որոնք յարուցվել են վերջին ժամանակ «Մշակի» և «Արձագանքի» մէջ եղած՝ բանակաւ ընթացքում, չը կարողանալով այդ հարցերից ոչ միայն փաստերով պատասխանել, իր շարժաթ- թերթի վերջին 22-որդ համարում հետեւեալ էլք է գտել նեղ դրութիւնից դուրս գալու համար: Փո- ղոցային հրապարակախօսներից օրինակ առնելով հասարակաց հարցերը թողած, որոնք և կարող են միմիայն իր յարգը հասկանալով մատուլի առարկայ լինել, Թովանիսեան հանդէս է դուրս գալիս իր իբր թէ սրամիտ ֆիլիեոսոսում՝ վերին աստիճա- նի ստոր և անաղին վարմունքով, այն է յեղա- շրջելով իրողութիւնները, տգիղ ակնարկներ, ին- սին ու աւացի աներ անելով «Մշակի» խմբագրու- թեան անդամները մի քանիստերի վրա, ստոր մե- ղադրանքներ և բամբասանքներ բարձրելով խմբա- գրութեան հետ ոչինչ կապ չունեցող մարդկանց վրա, ներկայացնելով որպէս խմբագրութեան ան- զամներ այնպիսի անձանց, որոնք շատ տարի է արդէն «Մշակի» խմբագրատան չէմք էլ չեն կո- խել, վերջապէս անարդար, ստու և տգէտ ան- նարկութիւններ անելով «Մշակի» խմբագրի անձ- նական, ընտանեկան՝ ներթական յարաբերութիւն- ների վրա: Եթէ մի որ և է այլ թերթ, ոտնակոխ անելով մամուլի պատիւը, սկսեք նոյնաման տղեղ ակնարկութիւններ անել և իրան Թովանի- սեանի անցեալի վրա, կամ նրա ընտանեկան դրամական յարաբերութիւններին վրա, որոնց ոչ մի աղին մարդ, ու՞մ մասին էլ լինի, իրան կրէք չի թող տայ չօտափելու մամուլի մէջ, որոնք կրէք մամուլի առարկայ, թէկուզ ֆելիե- սոսնի բաժնում, չեն կարող լինել և որոնց մա- մուլի մէջ այսպէս թէ այնպէս յարուցանել այն պատճառով արդէն վերին ստիճանի ստոր և ա- նաղին է, որ այդ տեսակ ակնարկութիւններից արդարանալը և ամեն հանգամանքներ հրապարա- կապէս մի առ մի բացատրել ու պարզաբանել նոյն մամուլի մէջ անհնարին է,—անշուշտ այդ տեսակ վարմունք նոյն Թովանիսեան վերին աս- տիճանի անաղին և ստոր կը համարէր: Ուստի թող չը զարմանայ պարոնք, որ մենք էլ ստիպ- ված ենք այժմ նոյնը նրա մասին ասելու. թոյլ տալ իրան այդ աստիճան ստորանալ և ստորաց- նել մամուլը, թոյլ տալ իրան հասարակաց նշա- նակութիւն ունեցող հարցերից խուսափելով ա- նարդար, ստու և տգէտ ակնարկներ անել այն- պիսի հանգամանքների մասին, որոնց հակառա- կորդի կողմից պարզաբանել անհնարին է մա- մուլի մէջ,—կարող է միմիայն այն մարդը, որը Արզար Թովանիսեանի նման՝ կատարելապէս ընկել է բարոյապէս:

ՆԱՄԱԿ ԱՌԱՅՈՒՅՈՒՅ

Մայիսի կէսից սկսվեցան մեր երկսեռ դպրոց- ների դռնօխի, կամ այսպէս ասած նախապատ- րաստական իսկ յունիսի մէկից հրապարակական հարցաքննութիւնները: Քննութեան՝ հետեւեալը գործացուցի կարելի է համարել, մանաւանդ ա-

դեռ չը գտնուեցան. ինչպէս նախորդ նամակազգրած նմ, երկուշի մը ազդեցութեան ներքե է որ կռուութիւն կը տիրէ: Սակայն եկեղեցիներն ու եկեղեցականները կրնան աւելի համարձակութիւն ցոյց տալ: Եկեղեցիները լրացիլ չէ որ կառավարական հրահանատ քննարկ—Այսու հանդերձ պակաս չեն «խոհմակարար» կոչուած անձինք որք հետամուտ եղած են համոզելու թէ Րաֆֆիի համար յայտնուած ցոյցերն ներկայ պարագայից մէջ կը վերահասան ազդեցութիւն: Ինչ որ ալ ըլլայ արդէն յայտնի է թէ Րաֆֆի խորապէս կը տիրէ ամեն հայու սրտի վրա:

Սոյդ հոգեհանգստեան երկրորդ օրն էր որ Պօլսոյ հայկազգայութեան, վարդապետը և աւագերէց քահանայացի կը կարգէին Համագումար եկեղեցական ժողով պատրաստելու համար նոր կրօնական ժողովոց ընտրելուց հետագային ցանկ մը Ազգ. ժողովոյ այդ ցանկին մէջէն կը ընտրէ կրօնական ժողովու, տանն և չորս անգամ բարեկարգելու, որոյ պաշտօնավարութիւնը կը տե՛ն երկու տարի:

Յայտնի է թէ ինչ եկեղեցականներ որ կը գլխավորուին Պօլսոյ մէջ, կրօնական ժողովն անոնցմէ պիտի կազմուի, և որովհետև ի բաց առևտու քահանայներն Պօլսոյ գտնուող վարդապետաց ու եպիսկոպոսաց մեծամասնութիւնը չը պիտան մարդերէ կը բաղկանայ, ընտանաբար կրօն. ժողովն ալ այդպիսի տարրերներէ կազմուած կը լինի:

Եկեղեցական համագումար ժողովն այնպիսի մեքենայութեանց հանդիսարան մը կը դառնայ, որուն առջև արդարև կամայն աշխարհականը: Արդարև վարդապետներ որք իրենց կանգնուած մէջ բնա ծառայութիւնն մը չեն ըրած ազդին, որք իրենց անբարոյականութեամբն ու ապիտակեամբն նշանաւոր հանդիսացած են, այդպիսի վարդապետք այնքան թիւով քուէ կառնեն որ կը գերազանցեն նոյն իսկ մի Արուստանտեանց կախիկուորս Արդարև Արուստանտեանց Գարեգին եպիսկոպոսն, որուն անունն ամեն հայուն ծանօթ է, միայն տաանն և և ու թէ զուէ կառնու, անդին մի ո՛ր և է որդրումը Ֆակը վարդապետն նորա կրկնապատկեր կը ստանայ:— Երբ մի եկեղեցականի հարցուի զորոնիքն այս տարրերնակ երեւոյթին՝ պատասխանեց:

— Կարևոր անձանց վրայ կը կռուինք, կուտակեցութիւններու կը բաժնուինք, իսկ ուղիններու համար խնդիր չենք յարուցանելու, ամենքս ալ քուէնիս նմա կուտանք, առանց կարեւորութեան և ահա այսպէս մի ո՛ր և է ինքզ իրարման նշանաւոր կը հանդիսանայ իւր քուէներովն:

Սակայն պէտք է ըստեք թէ երբ անպիտաններու համար բարեկարգութեան քուէ կը տրուին, կան նաև կարևոր եպիսկոպոսներ որոց դէմ մարտնչելու չեն համարձակելու, վստան դի դիտեն թէ պէտք մարդիկ են, այսպէս էր ահա Նարայէ խորէն սրբազան, որ եկեղեցականաց գրեթէ միաձայնութեամբ ընտրուի ներկայացաւ: Եւ երէկ, ուրբայթ, Ազգ. ժողովն ընտրելով կրօնական ժողովն առաջնապէս քուէ մը կուտար խորէն սրբազանին:— Արեւելեան ընտրութեան մէջն են Նարայէ, Արուստանտեանց Գարեգին, և Արեւելեան Արեւելեան եպիսկոպոսը:— Մի քանի վարդապետներ և քահանայներ, յորս տէր-Յովհաննէս Մկրտան որ ձեզ ծանօթ է:

Արուստանտեանց եպիսկոպոսի համար քուէ չը տուին խումբ մը երեսփոխանք, առարկելով թէ կապակածանց երկխոսայ եպիսկոպոս մը այսպիսի պաշտօն տանող քուէ չըլլար:— Իսկ մեծամասնութիւնը կը կարծէր թէ երբ եկեղեցական մը անիրաւ կամ իրաւացի կապակածանց երկխոսայ է կառավարութեան կողմանէ, նոյն իսկ ազդին պարտականութիւնն է դորակել և անպիտան լինել այն եկեղեցականին, որ կը տեսնուի յանունն ազդի: Երբ մը վատութիւն է, և վատերը պէտք չէ երէք քապապայ մը սպասեն:

Բայց կարծիք մը կայ թէ դուջ կառավարութիւնը չը վաւերացնէ Արուստանտեանց եպիսկոպոսի ընտրութիւնը: Չենք կարծեր, որ կառավարութիւնը այսպիսի դժուարութիւն մը յարուցանէ, բայց անկարելի ոչ չէ:

Ազգ. ժողովն երէկ կարևոր խնդիր մ'ալ լուծեց—մի խնդրք թէ ինչ էր այդ կարևոր խնդրքը. Պէկեան թագուտ էֆէնդի խնդիրն էր:—Այդ անունը թերևս ծանօթ լինի «Մշակի» հին ընթերցողներուն:—Բայց նոր երիտասարդութիւնը 20—24 տարեկան, պիտի հարցնէ ինչնիս թէ ո՞վ է այդ անունը: Եւ այնպէս ալ է. երբ Ազգ. ժողովն, ազգն սկսաւ զբաղիլ Պէկեանի խնդրով և մենք օրն օրին կը գրեկնք «Մշակի» մէջ, այն ատեն այդ երիտասարդները մանուկներ էին. տասը

տարիներ անցան այդ օրէն ի վեր, աննոր մեծացան, մարդ եղան, ինչպէս Պօլսոյ ուրիշներ ալ տարիներն առին, երեսփոխան եղան և Պէկեանի խնդրոյն ժառանգութիւնը կար ու կը մնար:— Կարծես թէ սերունդներն իրարու պիտի փոխանցեն այդ խնդիրն, բայց վերջապէս Պատրիարքին յանձնուեցաւ խնդիրը լուծելը:—Պէկեան էֆէնդի Պէրլինի վերածողութիւնն անմիջապէս վերջ կապարտաներ Ներսէս Պատրիարքը թէ դաւաճանած է ազդին դէմ. հրակրուեցաւ հաստատել այդ ամբաստանութիւնները. խայտառակեցաւ ամբաստանութիւնները դրպարութիւնները էին. ժողովը որոշեց, որ Պէկեան էֆէնդի ներողութիւն ինչորէ Պատրիարքէն, ինչպէս օրէնքը կը տրամադրէր Պէկեան չը հնազանդեցաւ. հրաժարեցաւ. ուրիշ թաղէ նորէն ընտրեցաւ. ժողովը չը վաւերացուց. խնդիրը Պատրիարքին յանձնուեցաւ. ներողութիւն դրուեցաւ Պատրիարքէն. ժողովին եկաւ խնդիրը վերջապէս տաւը քուէ ու վերջապէս երեսփոխան:—Եթէ ինչն ալ ընդունի այս պաշտօնն, ալ Աստուած դիտէ ինչ պիտի կաշինք. այսպիսի շատախառ, անհամակրելի մարդ դժուար է երկու հատ գտնել:

Ազգ. ժողովն երէկ օրէն մի քանի դարձեր ալ ըրաւ և երկրաբանութեան համար հանգիստ առաւ: Ազգ. ժողովը երէկուան նիստն ալ հանդարտ ու խաղաղ էր, թէպէտ կըրէր բարեբեւութեան խնդիրներ կային, բայց թէ նորոնովր ատենապետ ըրիչի պ. Թիրեաքեանի չէզոք դիրքովն և թէ երեսփոխանաց խոհակամութեամբն առանց փոփոխի անցաւ նիստը:

Ժողովն աչառու ըլլալու պարտականութիւնն մը ունի այժմ առկի քան երբէք: Դաւ կայ Ազգ. ժողովը դէմ:—Սակաւաթիւ երեսփոխանաց խումբ մը, բարեկարգ մի քանի էֆէնդիներէ հետամուտ է ստակալ Ազգ. ժողովը, կործանել սահմանադրութիւնը և ազգային գործերը անբարեկարգութեամբ իրենց ձեռքն առնուլ, առանց ազդին հակողութեան: Այդ խումբը դանաղան սպօրէն միջոցներու կը դիմէ, որոն աստ խօսեին երկար է: Սաչարն ըստ թէ այս անգամուան նիստը Պատրիարքի հրահանգը չեղաւ: Պատրիարքն ինչն է նիստ կը հրակրէ Ազգ. ժողովն, որուն համար պատասխանատու է տերութեան առաջ, բայց ժողովն ինչն կորուէ թէ ինչ խնդիրներով պիտի դրաղի: Արդ ատենապետը որոշած էր, որ այս նիստն պիտի կատարուին ընտրութիւնը և յետոյ ժողովը պիտի զբաղէր համարաւորութեան խնդրով: Երբ կրօնական և քաղաքական ժողովները կառարտեն իրենց պաշտօնավարութեան չըջանել, իրենց ընդհանուր համարը կուտան Ազգ. ժողովին: Այդ Նուրեան էֆէնդիի քաղաքական ժողովն, այժմ ալ խրիմեան սրբազանի Արուստանտեանց ժողովն իրենց պաշտօնն աւարտած են և ըստ օրէնի հաշիւ պիտի տան, և ահա Պատրիարքը կը դիմարդէ այն համարաւորութեան. տարրերնակ պահանջում, որուն հանդէպ կապչէ ամեն ոք. բայց պ. Թիրեաքեան Պատրիարքին կը յայտարարէ թէ ինչն Պատրիարքը, կրօնական ու քաղաքական ժողովներն ամենքն ալ պարտաւոր են Ազգ. ժողովը հպատակելու. եթէ Պատրիարքը չը ստորագրէր հրակրները, ինչն պատրիարքական փոխանորդին ստորագրել կուտայ հրակրագրերն, եթէ նա ալ չը ստորագրէ, ինչ Թիրեաքեան ատենապետ Ազգ. ժողովը կը հրակրէ ժողովն ի նիստ, և Պատրիարքէն կը պահանջեն թէ ինչ իրաւամբ կը միջամտէ ժողովը գործերուն մէջ: Պատրիարքական փոխանորդը կը ստորագրէ այս անգամ և խնդիրը կը կարգադրէ: Պ. Թիրեաքեանի հետեւ ընթացքն ապացուց մ'է թէ Ազգ. ժողովն անհամակր ընծայելու և նմա բարձր դիրքը պահպանել տալու համար չը պիտի կասի ո՛ր և է սպառնալեաց առաջ:

Ժողովն այս անգամ չը զբաղեցաւ Պատրիարքի խնդրովն, յոյս ունենալով թէ քիչ օրէն Յարութիւն Պատրիարքի Երուսաղէմական ընտրութիւնը կը վաւերացուի և խնդիրը կը լիննայ: Սեմօն պէջ Մարտուտ խոտապետ է Ազգ. ժողովն ատենապետին, որ քիչ օրէն այս խնդիրը կարգադրուու հետամուտ պիտի լինի. իսկ Պատրիարքն ինչն ալ կը փոխադի Երուսաղէմ երթալ, երկուշի ունի թէ Երուսաղէմի նոր Պատրիարք մը կընտրուի և ինչ բայ կը մնայ Յարութիւն Պատրիարք մտադրէ է Պօլսոյ պատրիարքութիւնը ձգել քաշուիլ, եթէ ուշանայ իւր ընտրութեան վաւերացումը:

Հայկակ

ԱՐՏՍՈՒՆ ԼՈՒՐԵՐ

—Կայրոյից հաղորդում են «Հիւսիսային գործակալութեանը», որ հաւատով աղբիւրներից լուր է տարածված Մասովայում թէ Մենելիկ ասպետավեց, իսկ Նեբուսի որդին մուսաթուաւորվելուց:

—«Հիւսիսային գործակալութիւնը» տուցել է վիճենայից հետեւայ հետազոտը: Սօֆիայից հաղորդում են «Correspond. de l'Est» լրագրին, որ կօրուրդան իշխանը դիտարկութիւն յայտնեց ներկայ գտնուել Ֆրիդրիխ կայսրի յիշատակին կատարելի հոգեհանգստին բողոքական եկեղեցում: Սակայն դերմանական հիւպատոսը իմաց տուց, որ ի՞նչ իշխանը կը մտնի եկեղեցի, ինչն հիւպատոսը իր բոլոր շրջապատողներով դուրս կերթայ եկեղեցուց: Այդ պատճառով իշխանը անմիջապէս հրամայեց կատարել նայն ժամին հոգեհանգիստը մայր-եկեղեցուց:

—Բերլինից հեռագրում են որ պաշտօնական լրագրում հրաման է հրատարակված պրուսական լանդտագը յունիսի 17-ին դաւանակելու մասին:

—Թիւրքաց ֆինանսների մինիստրը, Բայրամի օտօնի մօտենալու պատճառով, սարսափելի դժուար դրութեան մէջ է գտնվում: Նա ստիպված է անպատճառ երէք միլիոն ֆրանկ ձեռք բերել, որ կարողանայ դնէ անսական ուժեղ տալ թիւքաց մայրաքաղաքի պաշտօնեաներին: Առ այժմ նրան անհրաժեշտ է 40,000 թիւքաց լիւրա, այսինքն մօտ 1 միլիոն ֆրանկ, տարեկան 15 տոկոսով: Չը կարողանալով մեծ գումար փոխ առնել, մինիստրը դիմեց բոլոր գնեւարհ-հանազապետներին՝ հրամայելով նահանգապետները մօտ գտնված բոլոր ազատ գումարները ուղարկել պետական գանձարանը: Մի քանի նահանգապետներ կատարեցին մինիստրի հրամանը, բայց Բէյրութի վալի Ալի-Փաշան պատասխանեց, որ դժբաղդաբար, ներկայ րուպէս ինչն մի կօպէկ անգամ չունի, որովհետև վիլայեթից ստացված եկամուտները հաշիւ են կարողանում ծածկել վիլայեթի վարչութեան համար պահանջվող ծախսերը:

ԻՍԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մի յայտնի անգլիացի լրագրագետ՝ Դաւիթ Անդէրսօն, որը 50 տարեկան է արդէն և շատ փորձված հրատարակախօս, և որը 30 տարի շարունակ գրում է անգլիական այլ և այլ լրագրի գրքերում, հիմնել է այժմ մի նոր ձևի լրագրի Լոնդոնում, այն է լրագրական դրոպը: Նա իր կենցաղի մէջ առիթ է ունեցել տեսնուել թէ երբեք անսպաղ գրողները, որոնք տաղանդ էլ ունենին, շատ անգամ անողորմութիւն չէին ունենում մամուլի գործունէութեան մէջ, որովհետև նրանց պակասում էր նախապատրաստական գործնական կրթութիւնը: Հրատարակախօս լինելու համար իւր ուղինալով իր երկարամայ փորձով անպակցել այդ տեսակ սկսող-հրատարակախօսներին, Անդերսօն հիմնել է լրագրական դրոպը: Կարողի կուրս ստեղծ է մի տարի միայն, և երիտասարդ ուսանողներից իւրաքանչիւրը վճարում է Անդերսօնին տարեկան 2,000 մարկ: Ուսան ընթացքը այդ տարրերնակ դպրոցում հետեւան է. ինչն Անդերսօնը դառնում է մի երեսակայական մեծ թիւքի խմբագիր, իսկ նրա ուսանողները նրա աշխատակիցներ են դառնում: Եւ ահա ամեն առաւօտ, ժամը 10-ին, յիշեալ երիտասարդները հաւաքվում են նրա մօտ և նրանցից իւրաքանչիւրը ստանում է Անդերսօնից մի մի դաս, կամ յանձնարարութիւն նոյն օրվայ համար. մինը պիտի գնայ գորհանդէպ ներկայ գտնուելու, այդ գորհանդէպը 100 տողով նկարագրելու համար, երկրորդը դիտել է թատրոն, երրորդը ուղարկել վճար է պատրաստելու, չորրորդը մի որ և է ժողովի նիստին, հինգերորդին Անդերսօն տալիս է մի ամբողջ սիւնակ մեծութիւն ունեցող յօդուած և պատրաստելու է նրան այդ յօդուածի մտքերը ամփոփել կէս կամ քառորդ սիւնակի ձևով և այնն Նրանից յետոյ խմբագիրը մի որ և է աւարկայի մասին, որը կապ ունի մամուլի հետ, դասախօսում է իր ուսանողներին, իսկ երկուրեան բարձր աշխատակիցները կրկին հաւաքվում են իրանց վարժարանի մօտ և նրանցից իւրաքանչիւրը բերում է իր յօդուածը, կամ դեկլարացումը Անդերսօնի հայեցողութեանը ներկայացնելու, որը և ուղղում է յօդուածները: Լրագրական գրողները դասնայ ցանկացողները սովորում են այդ դպրոցում՝ ինչպէս պէտք է խօսիլ հասարակաց նշանաւոր գործիչների հետ, ինչպէս օրէնք է տեղեկութիւններ հաւաքել քաղաքում, ինչպէս պէտք է վարել պոլիցիական արհեստների հետ, ինչպէս պէտք է կազմել կարճ հեռագիրներ և ինչպէս պէտք է գեկուցումներ, ուսումնասիրում են մամուլի վերաբերեալ օրէնքները և այլն: Ուսուցիչը, ի հարկէ, ի նկատել է առնում իր աշակերտներին այս կամ այն հակումները, մինին աւելի վարժեցնելով թատրոնական րեցնդիաներում, միւսին քաղաքական թեմաներ տալով և այլն: Անդերսօնի կարծիքով, առաջնորդող յօդուածները գրողը պէտք է անպատճառ հմուտ լի-

նի քաղաքատնտեսական և իրաւաբանական դիտարկումներին, և առհասարակ պէտք է հիմնաւոր կրթութեան տէր մարդ լինի: Անդերսօն վարժեցնում է իր աշակերտներին կարճ միջոցում շատ յօդուածներ գրելու, ընտելացնելով քաղաքական գրողներին անկողմնապահ լինել և գրելու ժամանակ դպել իրանց անձնական զգացմունքները: Անդերսօն հաւատացնում է, որ իր դպրոցից դուրս եկածները անպատճառ մեծ աջողութիւն կունենան լրագրական գործում: Այդ դպրոցում արդէն ուսանող են գրվել համալսարանաւորտ մի քանի երիտասարդներ, որոնց թուում և մի օրով որդին:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱՎԱՍԿՈՒԹԻՒՆՆԵՑ

ՊԵՏԵՐՔՈՒԳՅ, 10 յունիսի Հրատարակված է անուանական Բարձրագոյն հրովարտակ նոր ձևի թղթադրամներ հրատարակելու մասին: Փոխանակութիւնը սկսվում է թղթադրամների արժողութեան համեմատ, սկսած 25 լուրիանոցներից: Փոխանակութիւնը կատարվում է նախ պետական բանկում և նրա գրասենյակներում, և ապա բանկային բաժանմունքներում և գանձարաններում: Փոխանակութիւնը կը սկսվի 1888 թ.ին և կը տարածվի ամեն տեսակ արժողութիւն ունեցող տոմսային լրագր մինչև 1890 թ.ի յունվարի 1-ը: Այժման ձևի թղթադրամները նորերի հետ պարտաւորեցուցիլ փոխանակութեան ժամանակամիջոցը նշանակվում է երէք տարի՝ այն է 1890 թ.ի յունվարի 1-ից մինչև 1893 թ.ի յունվարի 1-ը:

ԲԵՐԼԻՆ, 10 յունիսի: «National Zeitung» լրագրի ստացած տեղեկութիւնների համեմատ, Վիլհելմ կայսրը և կայսրուհին կը թագադրվեն աշունքին որպէս պրուսական թագաւոր և թագուհի:

ՓԱՐԻՉ, 10 յունիսի: Ֆրանսիական ակադեմիայի վարչական յանձնաժողովը այսօր առաւօտ մինիստր-հաղաք Ֆլօլենի մի խնդրագիր ներկայացրեց թոյլ տալու Օմալենս դքսին, որպէս ակադեմիայի ամենաբարձրագոյն անդամներից մինին վերադառնալ ֆրանսիա: Ֆլօլէ պատասխանեց, որ այդ հարցը կարող է վճուել միայն մինիստրական խորհուրդը, խոտանալով հաղորդել նրան յանձնաժողովի խնդիրը:

ՊԵՏԵՐՔՈՒԳՅ, 10 յունիսի: Մեծ իշխան Միխայիլ Նիկոլաևիչի անշարժ կալուածները համար հրատարակված է մ.թ.թ. 10 օրէնքը, այսինքն մայրաքաղաքի հիմնող մահաց 30 տարեկանից: Մեծ իշխան Մեծ իշխանուհի Օլգա Ֆեոդորովնայի ձեռքը, իսկ այնուհետև կը դառնան Մեծ իշխանի աւագ որդու և նրա սերունդի աւագ ներկայացուցչի սեփականութիւն: Եթէ սերունդը կը սպաւվի, այն ժամանակ կալուածները դաճաւու են Մեծ իշխանի երկրորդ որդու և նրա ժառանգների սեփականութիւն: Իսկ եթէ արական սերունդը կատարելապէս սպաւուի, այն ժամանակ մայրաքաղաք կանցնի թագաւորական ընտանիքի այն անդամին, որը որոշված կը լինի թագաւոր կայսրի կաթնով:

ՕՐԷՍՏ, 11 յունիսի: Երէկ այստեղի նահանգական դատարանում վերջացաւ Միլազիկո կայսրանում յունվարի 17-ին պատահած ճանապարհորդագնացքի խորտակման գործը: Միլազիկո կայսրանի նախկին գլխաւորի օդնական օդակաշէտի անմեղ է ճանաչված. ժամարանք վճուց, որ դնայքի խորտակման դատանակ սպանված կալուածատէր Պօպօլի այրելի 20,000 լուրա չարով քաղաքացիական պահանջին պէտք է բաւարարութիւն տրվի: Իսկ դնացքի խորտակման ժամանակ մնացած վնասվածները ընտանիքների հետ երկաթուղիական ընկերութիւնը համաձայնութիւն կայացրեց դատաստանական գործը սկսելուց առաջ:

ՎԻԵՆՆԱ, 11 յունիսի: Վիլհելմ կայսրի գահական ճառին այստեղ մեծ անհամբերութեամբ են սպասում, որովհետև յոյս են տածում, թէ այդ ճառը կը պարզաբանէ քաղաքական դրութիւնը: Ունդարական մամուլը ցանկութիւն է յայտնում, որ դահական ճառը հանգիստաւոր կերպով հաստատէ: Աստիքային հետ կապած դանակեցութիւնը: Մի և նոյն ժամանակ վերոյիշեալ մամուլը իր դժգոհութիւնն է յայտնում Բերլինի և Պետերբուրգի մէջ սկսվող կասկի առիթով:

ՓԱՐԻՉ, 11 յունիսի: Մինիստրների խորհուրդը այսօր կարծիք յայտնեց, որ ի նկատի ունենալով այժման հանգամանքները, անհրաժեշտ է թոյլ տալ Օմալենս դքսին ֆրանսիա վերադառնալ:

Բեմի, 11 յունիսի Բէյնտազի հանդիսաւոր բացման ժամանակ, կայսրը, պալատի բոլոր պաշտօնեաների առաջնութեամբ, կը մտնի Սպիրտակ դահլիճը, ուր կը կատարվի Բէյնտազի բացման հանդիսակատարութիւնը: Կայսրին կուղեկցեն Բերլինում գտնուած բոլոր գահակալները, թագաւորական ընտանիքին պատկանող իշխանները, թագաւորական և արքայական տներու ուրիշ անդամները: Կայսրը կը նստի դահլի վրայ, նրանից մի քայլ հեռու կը նստեն գահակալները, ամբիօնի ստալ կը բազմէ կայսրուհին, զահի ձակ կողմում կը բազմեն թագաւորական ընտանիքին պատկանող արքայազուհիները և ուրիշ իշխանները: Բէյնտազի բացման հանդիսակատարութիւնից առաջ կայսրը ներկայ կը գտնվի մաղթանքին ամբողջի մատուած մէջ, որից յետոյ կայսրուհին ուղղակի կերթայ դէպի իր օթեակը: Վ. Ի. Ն. Ն. 11 յունիսի: Սօֆիայում մինիստրական ճիւղաձեւի վախճանին պէտք է մտնի պալատում սպասել: Իշխան Բերլինացի և Ստամբուլի մէջ եղած յարաբերութիւնները շատ լարուած են: Որովհետև Ստամբուլը յանդուգն և արհամարհական կերպով է վարուած իշխանի հետ, այդ պատճառով ընդհարումը աւելի սուր կերպարանք է ստանում:

Պետերբուրգ, 12 յունիսի: Յինանները մինիստրը ծանուցանում է, որ լուցկիի գործարանների պատէնաների տուրքերը դործ են դրվելու դէմտուօլի գանձարանի օդային ընդհանուր հիմունքներում: «С. Пет. Вѣд.» լրագիրը հաղորդում է, թէ որովհետև համալսարաններում հրէաների ընդունելութիւնը սահմանափակուած էր, բազմաթիւ հրէայ երիտասարդներ, որոնք սնցեալ տարի աւարտել էին իրանց ուսման ընթացքը զինուորականներում, չը կարողայան համալսարան մտնել, այդ պատճառով ժողովրդական լուսաւորութեան մինիստրը իր ուղարկած շրջաբերակահի մէջ մատնացոյց է անում, որ այս տարի առաւելութիւն տրվի այն հրէաներին, որոնք անցեալ տարի մնացել էին վերջինցալ դրութեան մէջ: «Гражданин» լրագիրը հաղորդում է, որ զաղաքում և բորսայում լուր է տարածվել թէ յուլիսին Պետերբուրգ կայցելէ դերմանական կայսրը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Յունիսի 10-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արծէ.	109	50
Համբուրգի վրա 100 մարկ —	53	55
Փարիզի վրա 100 ֆրանկ —	43	35
Ոսկի — արծէ —	8	90
Մարաշի կուպոններ —	177	—
Արծաթ —	1	39
Բորսային դիվիդենդներ —	6 1/2	7 1/2
Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին շրջանի	99	25
— — — — — 2-րդ —	98	62
— — — — — 3-րդ —	98	25
— — — — — 4-րդ —	99	—
— — — — — 5-րդ —	98	37
— — — — — 6-րդ —	99	75
Նոր 4 1/2% փոխառութիւն.	82	62
Արևելեան 5% փոխառութիւն. 1-ին շրջ.	98	62
— — — — — 2-րդ —	98	50
— — — — — 3-րդ —	97	55
Ներքին 5% առաջին փոխառութիւն.	275	—
— — — — — երկրորդ —	248	—
5 1/2% բէնտա	102	—
Ռուսիայի բէնտա	192	—
Եօթեորդ կոնսոլիդաւ փոխառութիւն.	165	—
Նոր երկրակառուցային բէնտա	98	75
5% զրաւակայն թղթեր կալուած.	—	—
փոխ. կրնդ. ընկ.	169	—
Գրաւ. թղ. Ազն. բանկի	97	37
5 1/2% զրաւակայն թղթեր Խերսոնի կալուած բանկի.	98	50
6% զրաւակ. թղ. Խարկովի կալ. բան.	101	—
— — — — — Պոլսական —	101	—
— — — — — Պետ. Տուրակ. —	100	25
— — — — — Կիւնովի —	100	50
— — — — — Մոսկովայի —	101	75
— — — — — Բեսարաբ. Տուր. —	100	50
— — — — — Նիժ. Սամար. —	101	—
— — — — — Վիլնայի —	101	—
— — — — — Քիւրիլի — 27 և 43 տ. —	—	—
— — — — — Քուրսկի — 18 և 43 տ. —	—	—
Վ. օլժակո-կամուկի բանկի ակցիաները 720	—	—
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ. 267	—	—
Բերլինի-Քոլոզովի ընկ.	—	—
Ս. Պետերբուրգի քաղաքային օրդնագրիները.	94	12
Մոսկովայի քաղաք. օրդնագրիները	95	—
Օրդնայի —	93	—
Քիւրիլի քաղաք. կրնդ. ընկ. օ.	—	—
Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը ամուր է:	—	—

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

ՀԱՅՈՒՆՆԵՐ ԲԱՐԵՂՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ վարչութիւնը որոշել է առաջիկայ տեղեկութիւններ ամսին հիմնել Քիւրիլի մէջ «ԵԱՐ ՈՒ ՁԵՆԻ» դպրոց: Հայոց ծխական դպրոցներում աւարտող աշակերտուհիներին ցանկացողները մտնել այդ դպրոցը, թող իրանց խնդրքով դիմեն մինչև ներկայ ՅՈՒՆԻՍ ամսի 20-ը տիկին Վարվարէ Բօտի-Նեանին, Գանսօվսիայա փողոց, տուն Շապիւհանի № 25: 1—3

Միայնակ մի մարդ կամենում է ԿՕՋՐՈՒՄ ունենայ մի բնակարան, առանձին կամ ընտանիքուով, բոլոր յարմարութիւններով, մի կամ երկու սենեակ: Դիմել «Մշակի» խմբագրութեանը: 1—3

ԳԻՐԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ ՊԱՍՏԱՌՆԵՐԻ ԵՒ ՄԵՐՔԵԼԻ

Ե. Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆՑԻ

Միջի-փողոցի անկիւնում (երկրորդ սուն, դէպի աջ կողմ՝ նրևանեան հրապարակից), Նարինանովի տանը ԲԱՅՎԱՍԵ Է ԵՐԿՐՈՐԳ ՊԱՆՆԵՍ ԿԵՐՕՍԻՆԸ ՄԱՍ ՄՍՍ ԾԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՐ: Մեր ստացած կերօսինը տարբերվում է իր յատկութեամբ Քիւրիլիում մաս մաս ծախվող կերօսինից: Նա հոտ չունի և կատարելագույն անվտանգ է:

ԳՆԵՐԸ ՉԱՓԱՌՈՎՈՒՄ ԵՆ ՀԱՄԵՄՍ ԲԱԳՈՒԻ ՎԱՃԱՌԱՆՈՑԻ ԳՆԵՐԻՆ:

Շառաների կողմից խաբէրայութեան առաջն առնելու համար իւրաքանչիւր ծառային, որ գալիս է կերօսին առնելու, տրվում է մի ՄԱՐԿԱ «E. A. Патровъ. Керосинъ» դրութեամբ:

Առաջին պահեստը. ՎՕՐՈՆՅՕՎԻ ԱՐՁԱՆԻ ՄՕՑ, Պալլոսկու բժշկարանի կողքին: Արքեւնի և հասարակական հիմնարկութիւնները կարող են կերօսին ստանալ առանձին գրքիկով և վճարել ամէ ամիս: 20—25 (Շ. Ե.)

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.
ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԻԻ և ԲԱՌՈՒՄԻ մէջ և փոխադարձ.

Հինգշաբթի, յունիսի 23-ին, ԱՐՄԷՆԻԱ (ARMÉNIÉ) շոգենաւը, նաւապետ ԳԱՐԻԳ (GARRIGUES) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն, Կ. Պոլի և Մարսէյ: Տեղեկութիւնները մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին, Բաթումում՝ Լէմոլդուի տան, Նաբերէճնայա, և Քիւրիլիում՝ Նախկին Արժրուհի դպրեւան, № 103: 2—4

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES
PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.
ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
(ՄԵՆԱԺԸՐԻ ՄԱՐՏԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԻԻ և ԲԱՌՈՒՄԻ մէջ և փոխադարձ

Ուրբաթ, 17/29 յունիսի ԲԱՌՈՒՄԻՑ դուրս կը գնայ շոգենաւ LE NIEMEN (ՆԻԷՄԷՆ) նաւապետ ՏԵՐՍՈՆԻ (ՍԵՅՊԻՕՆԻ) մտնելով Կ. Պոլիս, Զմիռնիա և Սիրա: Ազգէնները՝ ԲԱՌՈՒՄԻՄ պ. Գ. ԷՍՍԷՆԺԷՐ, իսկ Քիւրիլիում՝ ԳԻՐԳՐ ԷՆՋՈՒԲԵԱՆ ԷՆՋՈՒԲԵԱՆ: 2—2

Въ редакція газеты „МШАКЪ“ продаются слѣдующія брошюры: 1) „Экономич. Положеніе Турецкихъ Армянь“, публич. лекція Д.—ра Г. Арцруни, перев. съ арм. А. Аракелянца. Цѣна 25 к. 2) Die Oekonomische Lage der Armenier in der Türkei, übersetzt von A. Amirchanjanz. Preis 25 k. 3) Die Hungersnoth in Türkisch-Armenien, ein Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von Amirchanjanz. Preis 20 kop. Иногородные, желающие получить брошюры, благоволят присылать по 30 коп. почтовыми марками, за каждую брошюру. Адресъ. Тифлисъ. Редакція „Мшакъ“, или Tiflis, Redaction „Mschak“. (б)

Մարմնի մասերը, մասնաւոր ոտների մասերը փոխելու պահպանող փոշի

ԳԱԼՄԱՆԻՆ

Ժամկում է դեղատներում և դրոգիստների մաս կերպով նշանաւոր քաղաքներում և կայսրութեան բոլոր քաղաքներում ԳԼՄԱՆՈՐ ՊԱՆՆԵՍ գտնուած է ՎԱՐՇԱՎԱՑՈՒՄ, հարաւոր, դեղատան տիրոջ, Ֆարմացիայի մագիստր Վ. ԿԱՐՊԻՆՍԿԻՆԻ մօտ, Էլէկտրոպոլսկայ փողոց, № 39. Գալմանին մեծ արկղը արծէ վարչախալում 50 կ., փոքրը 30 կօպ:

ՊԵՏՐ Է ԶԳՈՒՅՆԱԼ ԿԵՂՏՈՒՄՆԵՐԻՑ

և պահանջել, որ իւրաքանչիւր արկղը կրէր փոշու գործածութեան բացատրութիւնը և ֆարմիցիոցահանդիսի մեղաները: 4—10 (б)

Երկու ուսուցիչներ պատրաստում են աշակերտներին Գիմնազիայի և Ներսիսեան դպրանոցի առաջին և երկրորդ դասարանների համար: Հասցէն իմանալ «Մշակի» խմբագրատանը: 2—3

ԳՈՐԾԱՐԱՆ

ԱՐՈՒՆԵՍԱԿԱՆ, ՄԻՆԵՐԱՎԱԿԱՆ, ՄՐԳԱՑԻՆ ԵՒ ԳԱՋԱՑԻՆ ՋՐԵՐԻ

Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՑԻ

ԲԱՌՈՒՄՈՒՄ

(Յերկօվնայա փողոցում, Կօնստանտինօփի տան կից, որտեղ գեոլոգիում է Լօրիօ և ընկ. տպարանը)

Պատիւ ունեմ յայտնելու այ. պ. բժիշկներին և յարգելի հասարակութեանը որ ես նորից վերանորոգեցի և նշանաւոր կերպով ընդարձակեցի իմ գործարանս, աշխատելով բաւականացնել ժԱՄՍ. ՆԱԿԱԿԻՑ ԳԻՏՈՒԹԵԱՆ բոլոր ՊԱՆՆԵՐՆԵՐԻՆ, ջրերի պատրաստութեան մեթոդներով:

Գործարանի կառավարութիւնը ես յանձնեցի ՖԱՐՄԱՑԻՍԻՆԻ մի ՊՐՈՎԻԶՕՐԻ, որ փորձառութիւն է ստացել Ռուսաստանի մայրաքաղաքներում Գործարան ունի ամենամեծ ձի մեքենաներ, նոյնպէս և Չիվիի հուշակար ՖԻՄՏՐԸ, որը միակ է, որ աջողութեամբ մաքրում է ջրերը կապարից, կրից, երկաթից, օքսիտակաւ, միլներալական մասնիկներից ու աղերից և դերազանցում է բոլոր միւս ֆիլտրներից իր մեքենայական և քիմիական գործողութեամբ:

Պրովիզօրը մշտապէս գտնուած է և անձամբ պարապում է իմ գործարանում: Ընտրելով այն օժանդակ միջոցներ, որ տալիս է դեղութիւնը անալիտիկական քիմիայի ճիւղում, այսուհետեւ իմ գործարանում կը պատրաստվեն, լազի դէղաբան, մրգային և զազային ջրերից, բոլոր ՄԻՆԵՐԱՎԱԿԱՆ ԲՅՈՒՄՈՒՄՆԵՐԸ, ինչպէս օրինակ՝ Վիլի, Էմի, Կարսապի, Մարիէնապի ջրերը, լուծողական ջրերը բոլոր յայտնի աղբիւրների և այլն, հետեւելով յայտնի հետազոտողների տուած կանոններին: Արուեստական միներալական ջրերը, որոնք այժմ խորհուրդ են տալիս ընդունել հուշակար բժիշկներից, կարող են ոչ թէ միայն փոխարինել ընտանի ջրերին, բայց և ունեն մի քանի դերազանցութիւններ. նրանք կարող են միշտ թաքն դրութեան մէջ ձեռք բերվել, մի և նոյն ժամանակ պարեմակցելով իրանց մէջ ածխածին գազերի աւելի մեծ քանակութիւն, այդպիսով աւելի ախորժեղի դառնալով խմելու համար և աւելի շուտ ներգործելով հիւանդ կազմուածքի վրա:

Աւելորդ չեմ համարում ասել որ ես միշտ աշխատում եմ պահել գործարանս կատարելա մաքրութեան մէջ և վերաբերվել դէպի գործս ամենամեծ ճշգրտութեամբ և բարեխղճութեամբ, որի մասին յարգելի հասարակութիւնը կարող է համոզվել անձամբ այցելելով գործարանս ամեն ժամանակ:

Տարածանութիւններից խուսափելու համար, խոնարհաբար խնդրում եմ իմ ջրերի գործածողերին պահանջել որ իմ բոլոր արդիւնքները կրեն իմ ֆիլտրայի նշանակը, ջանի որ ուրիշ գործարաններ կարող են ի չար գործածել հասարակութեան հաւատարմութիւնը:

Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՑ

23—50 (б)